ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 710-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 898-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

07/11/2024 - 25/11/2024

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 5 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 5 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

1 կողմ

4 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

25/11/2024

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 710-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 898-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Լիաննա Պետրոսյան 10.11.2024 12:08:12	1-3 անձից բաղկացած ընտանիքների համար դիտարկել սոցիալական բնակարանների տարբերակը կամ նախատեսել այլ կարգավորումներ:	Ներկայում քննարկվում են սոցիալական բնակարանների հատկացման պայմանները, սակայն այս դեպքում չի ենթադրվում սեփականության իրավունք, այլ անհատույց օգտագործման իրավունք: Այդուհանդերձ, 1-3 անձից բաղկացած ընտանիքների դեպքում առաջարկվում է նախապատվությունը տալ այն բնակավայրերին, որտեղ ընտանիքի յուրաքանչյուր անդամի	

			հաշվով աջակցությունը կազմում է 4 կամ 5 մլն դրամ:	
2	Լիաննա Պետրոսյան 10.11.2024 12:08:12	Կերակրողը կորցրածի, զոհվածի ընտանիքներին հնարավորություն տալ օգտվել առավելագույն շեմից:	Զոհվածի, կերակրողին կորցրածի կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող անդամով, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխա ունեցող ընտանիքների համար ծրագրով սահմանված է առաջին փուլից օգտվելու արտոնություն: Ինչ վերաբերվում է աջակցության չափին, ապա այն կախված է բացառապես այն բնակավայրից, որտեղ ձեռք է բերվում կամ կառուցվում է անշարժ գույքը:	
3	Լիաննա Պետրոսյան 10.11.2024 12:07:30	2025 թ հունվարի 1 -ից Ծրագիրը բացել նաև 63+ տարիքի անձանց համար:	Ներկայում քննարկվում է ծրագրում բարեփոխումների իրականացման հարցը, որի շրջանակում կդիտարկվի նաև այս առաջարկը:	
4	Լիաննա Պետրոսյան 10.11.2024 12:07:30	Վերանայել աջակցության բազային գումարը՝ համապատասխանեցնելով այն ՀՀ անշարժ գույքի շուկայում առկա գներին:	ՀՀ կառավարության 16.05.2024թ. թիվ 710-Լ որոշմամբ նախատեսված աջակցության չափերը սահմանելիս հիմք են ընդունվել այդ պահին գործող	

			շուկայական գները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի հաստատումից հետո մինչ օրս անշարժ գույքի շուկայում գների էական փոփոխություն տեղի չի ունեցել, ուստի ներկայում խնդիրն արդիական չէ:	
5	Լիաննա Պետրոսյան 10.11.2024 12:07:30	Քաղաքացիության պահանջը չդիտարկել դիմելու պահի դրությամբ, այլ՝ պահանջը ծագի, օրինակ, 3-5 տարվա ընթացքում՝ հաշվի առնելով քաղաքացիություն ստանալու հետ կապված տեխնիկական մեծ խնդիրները:	Ներկայում քննարկվում է ծրագրում բարեփոխումների իրականացման հարցը, որի շրջանակում կդիտարկվի նաև քաղաքացիության դիմելու գործընթացն արագացնելու/բարելավելու հարցը նույնպես:	